ռբն, խնդրեաց բառնալ զնեղութիւնս նոցին, և չտալ հրովարտակ 'ի ձեռս այլազգեաց, մինչչեւ ծանուցեալ լցէ դատաւորին զխնդիր նոցա, և խափանել զառաջին հրովարտակն, զոր առեալ էին։ Գրեցաւ դարձեալ հրովարտակ· քննել դատաւորին զգերեզմանատունն համաձայն վաւերական թղթոցն Հայոց և մնալ 'ի ժառանգութեան նոցին, մերժել զայլազգիսն և խափանել զվէճս նոցա, զի մի գործեսցեն ընդդէմ օրինաց, և մի հարկ լիցի կրկին հրամանի· 'ի \ Շապան ամսոյ՝ ١٠٢٣ (1614)։

Այն ինչ դադարեալ համարէին աղմուկ խռովութեան այլազգեաց՝ սակս գերեզմանատան, բացաւ դուռն այլ իմն վնասուց, զի այլազգիք Սիոնի 'ի գիշերի ծակեցին զորմն· Ս· Փրկչի վանաց եւ ընկեցին զմեծամեծ քարինս 'ի պարբսպէ նորին, եւ կամէին կործանել զնա։ Ի ձայնէ և 'ի դնդմանէ գործեացն քանդման, լուեալ միաբանացն, աղաղակեցին հասանիլ յօգնութիւն, և նոցա թողեալ զգործն փախեան անտի։ Եւ 'ի լուսանալ առաւօտուն՝ դնաց անդր Գրիգոր Պարոն Տէր, եկն եւ դատաւոր քաղաքին ընդ մեծամեծս այլազգեաց, և քաղաքապետն Մօշխապար Աղա, և 'ի քննութեան պահու տեսին զի քակեալ էր ծեփն հարաւային որմոյն և ծակոտեալ յարեւելից յարեւմուտս 16 կանգուն, և անկեալ քարինք մեծամեծք։ Եհարց դատաւորն ցԳրիգոր զպատճառն, եւ թէ ունի՞ս կարծիս ինչ 'ի վերայ ուրուք, և նա ասէ· բաց 'ի բնակչաց Սիոնի չունիմ կարծիս 'ի վերայ այլոյ ուրուք, զի յառաջմանէ անտի թշնամութեամբ են ընդ մեզ, և մատոյց զհրովարտակն, որ վասն կուսոյ և վնասուց նոցին, (1610)· և զայլ հրովարտակ վասն սոյն խնդրոյ (1614)։ Եհարց դատաւորն և ցայլազգիս Սիոնի, թէ ո՞վ արդեօք արար զվնասն· և նոքա իբրեւ յանգետս յուրասա եղեն։ Ապա առեալ զքաղաքապետն գնաց առ զօրագլուխ զօրուն, որ նստէր յայնժամ յԵրուսաղէմ, և առաջի նորա հարցանել զվնասուցն վանաց, և իբրեւ ոչ կարացին դատանել զոք, հրաման ետուն Գրիգորի չինել և նորոգել զպարիսպն և զայլ տեղիս վանաց, դնել դուռն երկաթի, զի մի այրեսցեն զայն աւազակք· և փոխել զբարաւորս նորին· և նորա ձեռն 'ի գործ արկեալ չինեաց զայնս և նորոգեալ ամրացոյց զ-